



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց
Թեմա՝ Դիսլալիայի դրսևորման և հաղթահարման ուղիները
տարրական դպրոցում:

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան
Կատարող՝ Լեոնուհի Չոբանյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԴԻՍԼԱԼԻԱ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ	5
ԳԼՈՒԽ 2. ԴԻՍԼԱԼԻԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....	8
2.1 ԴՊՐՈՑԱՀԱՍՄԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ.....	8
2.2. ՀՆՉԱՐՏԱԲԵՐՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ.....	15
2.3 ՀՆՉԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքը կարևորագույն հոգեկան գործառույթ է, որի միջոցով իրականացվում է հաղորդակցում՝ այս կամ այն լեզվով: Եթե երեխաների լսողությունը և մտավոր ունակությունները պահպանված են, սակայն նկատվում են խոսքի խանգարումներ, ապա մասնագետները նրանց դասում են՝ խոսքի խանգարումներ ունեցող երեխաների խմբին:

Խոսքի խանգարումները բացասաբար են անդրադառնում անձի զարգացման վրա և դժվարացնում, երբեմն էլ անհնար են դարձնում շփումն ու հաղորդակցումը: Խոսքի և հաղորդակցման դժվարությունները կարող են ազդել երեխաների ուսումնական գործունեության, արդյունավետության, ուսման մեջ առաջադիմության, անձի սոցիալականացման վրա:

Հանրակրթական դպրոցներում՝ հատկապես տարրական դասարաններում, շատ հաճախ են հանդիպում հնչարտաբերման և գրելու գործընթացի խանգարումներ ունեցող երեխաներ: Այդ խանգարումները բացացաբար են ազդում երեխայի ուսման և առաջադիմության վրա:

<<Դիսլալիայի դրսևորման և հաղթահարման ուղիները տարրական դպրոցում>> աշխատանքի թեման խիստ արդիական է, քանզի մեր օրերում ավելացել է երեխաների թիվը, ովքեր խոսքի խանգարումներ ունեն, ինչն էլ խոչընդոտում է ուսումնական նյութի յուրացմանը: <<Դիսլալիայի դրսևորման և հաղթահարման ուղիները տարրական դպրոցում>> հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել դիսլալիայի դրսևորման և հաղթահարման ուղիները տարրական դպրոցում: Աշխատանքում մանրամասն ներկայացված են դիսլալիայի դրսևորումը տարրական դպրոցում, բացահայտումը, լոգոպեդական աշխատանքի փուլերը, բովանդակությունը: Սույն աշխատանքը նպատակ ունի գործնականորեն աջակցել հնչարտաբերման գործընթացի խանգարումներ ունեցող երեխաների կրթության պատասխանատու գործն արդյունավետորեն կազմակերպելուն: Ներկայացված տեսական և գործնական նյութերը կիրառելի և օգտակար կարող են լինել ոչ միայն լոգոպեդների, նախադպրոցական և տարրական կրթության ոլորտի մասնագետների, այլև ծնողների համար՝ հասկանալու երեխայի խնդիրը և հնարավորինս աջակցելու դրա շտկմանը: Այդ խնդիրները շտկվում են լոգոպեդների կողմից տարված աշխատանքների շնորհիվ:

Հայաստանում տեղի ունեցող կրթական բարեփոխումների պայմաններում լոգոպեդը հանդես է գալիս որպես ներառական կրթություն իրականացնող կրթական հաստատությունների բազմամասնագիտական թիմի անդամ: Նա կարևոր դեր է

ստանձնում երեխաների կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատման և նրանց ցուցաբերող աջակցության գործընթացում, ինչպես նաև համագործակցում է այլ մասնագետների, ուսուցիչների և ծնողների հետ: Լոգոպեդները կարող են ծանոթանալ հնչարտասանության, հնչությային գործընթացների, գրավոր խոսքի խանգարումների, հաղորդակցման դժվարությունների հաղթահարման, խոսքի տեմպի ու ռիթմի կարգավորման, ձայնի ու շնչառության զարգացման, խոսքի ձևավորման խթանման, բառապաշարի հարստացման, խոսքի քերականական կողմի բարելավման մեթոդների ու միջոցների հետ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դիսլալիայի դրսևորման և հաղթահարման ուղիները տարրական դպրոցում:

Հետազոտության խնդիրն են՝

1. Ուսումնասիրել դիսլալիայի վերաբերյալ առկա բացահայտումները:
2. Հայտնաբերել դպրոցում դիսլալիա խոսքային խանգարումներ ունեցող երեխաներին:
3. Կատարել շտկողական աշխատանքներ:
4. Իրականացնել ամփոփում և արդյունքների վերլուծություն, կազմել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ տարրական դպրոցում դիսլալիայի դրսևորմանը ժամանակին բացահայտելով և հաղթահարմանն ուղղված հետևողական քայլեր կազմակերպելով, կարող ենք հաղթահարել այն:

Հետազոտության մեթոդներն են՝

1. Դիտարկման մեթոդ
2. Հարցման մեթոդ
3. Զրույց ,քննարկման մեթոդ:
4. Թեստերի մեթոդ

Հետազոտության ընտրանք՝ տարրական օղակի աշակերտներ:

ԳԼՈՒԽ 1. ԴԻՍԼԱԼԻԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դիսլալիա տերմինն առաջացել է dis- խանգարում և lalia բառերից: Այն գործածության մեջ է մտել 19-րդ դարի 30-ական թվականներից և թարգմանաբար նշանակում է թլվատություն:

Թլվատությունն առանձին հնչյունների, հնչյունախմբերի արտաբերական խախտումներն են բնականոն լսողության, տեսողության և ինտելեկտի դեպքում: Թլվատության ժամանակ խոսքը (այն համարվում է շփման միջոց, այսինքն՝ գիտակցության մի բարդ գործընթաց, որի ձևավորման մեջ մեծ նշանակություն ունեն խոսքալսողական և խոսքաշարժողական անալիզատորները) այս կամ այն չափով շրջապատի համար դառնում է անհասկանալի և կորցնում է իր արտահայտչականությունը: Հնչարտաբերման խանգարումներով երեխաները շատ հաճախ լինում են բարդությամբ տառադասարար, նրանք աշխատում են չխոսել, սովորած դասը չպատասխանել, որպեսզի չդառնան ծիծաղի առարկա:

Հնչարտաբերման թերությունների հաղթահարման ժամկենտները տարբեր են դրանք պայմանավորված են մի շարք գործոններով, ինչպիսիք են խանգարման բարդության աստիճանը երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները, պարապմունքների պարբերականությունը և հետևողականությունը, ինչպես նաև ծնողի օգնությունը: Լոգոպեդական պրակտիկայում շատ հաճախ հանդիպում են սուլական, լեզվաքմային, հնչյունների արբերման խախտումներ, իսկ հետնալեզվային, շրթնային, պայթական հնչյունների աղավաղումներն ավելի հազվադեպ են հանդիպում: Թլվատության առաջացմանը նպաստում են ինչպես կենտրոնական(կեղևային, ենթակեղևային հանգույցներ, հաղորդող ուղիներ և հաղորդող նյարդերի կորիզներ, որոնք գտնվում են գլխուղեղում) այնպես էլ ծայրամասային (բրոնխներ, շնչափող, ձայնալարեր, բերանըմպան, փափուկ քիմք, քթըմպան) գործոնները:

Թլվատության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել արտաբերական ապարատի կառուցվածքը, որի յուրաքանչյուր խանգարում կարող է պատճառ դառնալ հնչյունների ոչ ճիշտ արտասանությանը: Լինում են դեպքեր, երբ երեխաները լսողությամբ տարբերում են հնչյունները, բայց ինքնուրույն չեն կարողանում դրանք արտասանել, երբ խախտված է իմաստատարբերակումը, թե՛ հնչյութահնչյունային, թե՛ վանկային, թե՛ բառային մակարդակներում:

Հնչյունաարտաբերման խանգարումների մեջ հաճախ հանդիպում են հնչյունային (հնչույթային) ձևավորման մասնակի խանգարումներ: Խոսելու ժամանակ դրանք արտահայտվում են հետևյալ ձևերով.

- 1) Հնչյունների աղավաղում
- 2) Հնչյունի փոխարինումը մեկ այլ հնչյունով
- 3) Հնչյունների շփոթում
- 4) Հազվադեպ բացթողումներ

Ըստ ծագման՝ դիսլալիան (թվատությունը) լինում է բնածին և ձեռքբերովի: Առանձնացվում են դիսլալիայի երկու ձև (պայմանավորված խանգարման պատճառներով և տեղայնացմամբ)՝ ֆունկցիոնալ՝ (գործառույթային) և օրգանական (մեխանիկական):

Ֆունկցիոնալ թվատությունը հնչյունների արտաբերման խանգարումներն են, որոնց դեպքում չկան արտաբերական ապարատի կառուցվածքի օրգանական վնասվածքներ: Նման խնդիրներ ունեցող երեխաների մի մասի մոտ շարժումները բավարար են, իսկ մյուս մասի մոտ նկատվում է մի փոքր խախտում ձեռքերի և մատների շարժումների մեջ: Ֆունկցիոնալ թվատության ժամանակ նկատվում են սխալ հնչարտաբերում, թոթովախոսություն, որը պայմանավորված է արտաբերական ապարատի թերզարգացմամբ: Ֆունկցիոնալ թվատության պատճառ կարող են լինել սոցիալական գործոնները, այսինքն՝ խոսքի սխալ դաստիարակությունը, հաղորդակցման անբավարարությունը և սխալ խոսքի ընդօրինակումը: Հնչույթային ընկալման և լսողության թերզարգացումը հնչարտաբերման թերությունների պատճառներից է, որի ժամանակ երեխան դժվարանում է տարբերակել հնչյունները ըստ հնչական նրբերանգի (հնչեղ և խուլ բաղաձայներ):

Լսողության իջեցման պատճառով հույնպես կարող է առաջանալ թվատություն, այս դեպքում երեխաները դժվարանում են արտաբերել սուլական և շնչական, խուլ և հնչեղ բաղաձայները: Ֆունկցիոնալ թվատության ժամանակ արտաբերական ապարատի օրգանական շեղումներ , վնասվածքներ չկան, բայց երեխայի արտիկուլյացիան (խոսքի օրգանների դիրքը այս կամ այն հնչյունների արտաբերման ժամանակ, շուրթերի դիրքը, կտրիչների միջև եղած հեռավորությունը, լեզվի, փափուկ քիմքի, ձայնալարերի վիճակը) դժվար է ընթանում: Հետազոտության ժամանակ որոշ երեխաների մոտ նկատվում է խախտված շնչառություն, ձեռքերի և ոտքերի քրտնածություն, իսկ եզակի դեպքերում աֆֆեկտի բռնում: Ֆունկցիոնալ թվատության մեջ տարբերվում են շարժողական և սենսորային ձևերը:

Շարժողական թվատության դեպքում նկատվում են արոշ անճշտություններ, արտահայտչականության մեխանիզմի շարժական մասերում (շրթունքներ, ծնոտ, փափուկ քիմք): Շարժողական ֆունկցիոնալ թվատության ժամանակ կարող են լինել խախտումներ կամ հնչունային ընկալման թերզարգացում՝ հնչունային վերլուծության շեղումներ: Մենսորային ֆունկցիոնալ թվատության ժամանակ հնչունները չեն տարբերվում ըստ հնչողության: Հնչույթային խանգարումները արտահայտվում են հնչունների փոխարինումներով , շփոթումներով: Այս թվատության ժամանակ շարժումները և խոսքը որպես կանոն պահպանվում են: Այսպիսի երեխաների մոտ նկատվում է նաև եչաժշտական լսողության խախտում, որը զարգանում է անկախ լսողության սրությունից և երբեմն դժվարացնում է բառերի, արտահայտությունների ինտոնացիայի, շեշտադրման ընկալումը: Արտահայտչական միմիկայի խանգարումների դեպքում երեխաները չեն կարողանում փքել այտերը, կնճռոտել ճակատը, առաջ բերել շուրթերը, փչել, բացել բերանը:

Տարբերվում են դիսլալիայի (ըստ խանգարման բնույթի) հետևյալ ձևերը.

Արտաբերական – հնչույթային, որի ժամանակ երեխան րի կարողանում ճիշտ արտաբերել հնչունը կամ մի խումբ հնչուններ: Մեկուսացված ձևով ճիշտ արտաբերվող հնչունը սխալ է արտաբերվում խոսքում: վատ է տարբերակում կամ շփոթում է խոսքի մեջ հաջորդականությամբ կամ արտաբերմամբ մոտ հնչունները: Ակուստիկ չափանիշների գործողությունների թերզարգացմամբ առանձնացվում են տվյալ խանգարման երկու ձև: մի դեպքում նկատելի է հնչունների փոխարինման երևույթ արտաբերմամբ ավելի պարզ և արտաբերական հատկանիշներով պահանջվողին մոտ հնչունով: Մյուս դեպքում հնչունների տարբերակման, թերզարգացման և դրանց ոչ տեղին օգտագործման պատճառով նկատելի է հնչունների շփոթումներ: Դիսլալիայի այս ձևի ժամանակ երեխան գիտակցելով փորձում է ինքնուրույն շտկել իր խոսքը:

Արտաբերական – հնչունային, որի ժամանակ խանգարվում են ոչ բոլոր հնչունները: Հնչունների բացթողումներ գրեթե նկատվում: Հիմնականում դիտվում են հնչունների աղավաղումներ:

Ակուստիկական հնչույթային, որի ժամանակ նկատվում է հնչույթային լսողության թերզարգացում: Այդ պատճառով հնչույթների (հնչույթը իմաստատարբերակիչ դեր կատարող հնչունն է) ճանաչումը և տարբերակումը խախտվում են: Երեխայի մոտ հնչունների համակարգը թերի է ձևավորված:

Առանձնացնում են դիսլալիայի ևս երկու ձև (պայմանավորված սխալ արտասանվող հնչունների քանակով):

Մոնոմորֆ (պարզ), որի ժամանակ երեխայի մոտ նկատվում է մի հնչյունի և նույն հնչյունախմբին պատկանող հնչյունների խանգարում:

Պոլիմորֆ (բարդ), որի ժամանակ խանգարվում է տարբեր հնչյունախմբերին պատկանող հնչյունները: Որքան բարդ է հնչյունի արտաբերման գործընթացը, այնքան հաճախ է հանդիպում նրա խանգարումը: Նման թվատուփյան ժամանակ նկատվում են հնչյունների բացակայություն, շփոթում, փոխարինում: Հարկ է նշել, որ նախադպրոցական տարիքի երեխաների թվատությունը հաղթահարվում է ավելի կարճ ժամկետում, քան դպրոցականների մոտ:

Ըստ սխալ արտաբերվող հնչյունախմբերի՝ սուլականների սիգմատիզմ (ս, գ, ց, ձ, ծ), շչականների սիգմատիզմ (շ, ժ, չ, ջ, ճ), ռոտացիզմ (ռ, ր), լամբդացիզմ (լ), հետնալեզվայինների սխալ արտաբերում (կ, գ, ք, դ, խ) և այլն:

ԳԼՈՒԽ 2. ԴԻՍԼԱԼԻԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ:

2.1 ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դիսլալիայի դրսևորման և հաղթահարման ուղիները տարրական դպրոցում:

Հետազոտության խնդիր են՝

1. Ուսումնասիրել դիսլալիայի վերաբերյալ առկա բացահայտումները:
2. Հայտնաբերել դպրոցում դիսլալիա խոսքային խանգարումներ ունեցող երեխաներին:
3. Կատարել շտկողական աշխատանքներ:
4. Իրականացնել ամփոփում և արդյունքների վերլուծություն, կազմել եզրակացություն:

Հետազոտության ընտրանք՝ տարրական օղակի աշակերտներ:

Հետազոտության մեթոդներն են՝

1. Դիտարկման մեթոդ
2. Հարցման մեթոդ
3. Զրույց ,քննարկման մեթոդ:
4. Թեստերի մեթոդ

Դպրոցահասակ երեխաների հնչարտաբերման խանգարումներն ի հայտ են գալիս նախադպրոցական տարիքից և հաճախ պահպանվում են նաև դպրոցական տարիքում՝ բացասաբար անդրադառնալով ուսման առաջադիմության վրա:

Դպրոցահասակ երեխաների հնչարտաբերման խանգարումների հետազոտման աշխատանքներն իրականացվում են մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 25-ը: Հետազոտություններն իրականացվում են տվյալ դպրոցի բազմամասնագիտական թիմի անդամների (լոգոպեդ, հոգեբան, հատուկ մանկավարժ ուսուցչի օգնական) կողմից:

2022-23 ուս. տարվա հետազոտությունների արդյունքում Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմն. դպրոցում բացահայտվել են խոսքային խանգարումներ ունեցող մի շարք երեխաներ:

Տեղեկացնելով ուսուցիչներին և ծնողներին, ստանալով ծնողի համաձայնությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար կազմվել և լրացվել է խոսքի խանգարման թերթիկ կազմվել դասացուցակ և իրականացվել անհատական պարապունքներ ուսումնական հաստատությունում:

Լոգոպեդական հետազոտությունն իրականացվում է ըստ հետևյալ սկզբունքների.

1. Համալիր մոտեցում, համաձայն որի պետք է իրականացվի ոչ միայն լոգոպեդական, այլ նաև բժշկահոգեբանամանկավարժական հետազոտում:
2. Ամբողջականություն և հստակություն: Անհրաժեշտ է իրականացնել խոսքի բոլոր տեսակների (բանավոր, գրավոր), կողմերի (իմպրեսիվ, էքսպրեսիվ) և բաղադրիչների (հնչյունների արտասանություն, հնչությային լսողություն, բառապաշար, քերականական կառուցվածք) հետազոտում:
3. Անհատական մոտեցում: Հետազոտման գործընթացը պետք է համապատասխանի հետազոտվողի տարիքին, անձնային առանձնահատկություններին:
4. Ընթացիկ (դինամիկական) հետազոտում, որը ենթադրում է առաջնային հետազոտում և մշտադիտարկումներ (մոնիթորինգներ):

5. Պահպանված կարողությունների բացահայտում: Հետազոտման ընթացքում պետք է բացահայտել լոգոպաթի առկա խոսքային և ոչ խոսքային կարողությունները՝ լոգոպեդական աշխատանքը դրանց հիման վրա կառուցելու նպատակով:

Առանձնացնում են լոգոպեդական հետազոտության հետևյալ փուլերը.

Նախնական (կողմնորոշման)՝

- փաստաթղթերի ուսումնասիրում (բժշկական, մանկավարժական),
- գրույց լոգոպաթի և նրա ծնողների հետ,
- անկետային տվյալներ,
- անամնեստիկ տվյալներ (կյանքի, հիվանդության, հոգեֆիզիկական և խոսքային զարգացման),
- տվյալներ խոսքային և սոցիալական միջավայրի, դաստիարակության պայմանների, ընտանիքի կազմի վերաբերյալ և այլն:

Հիմնական: Բուն լոգոպեդական հետազոտում, որի ընթացքում հետազոտվում են խոսքի բոլոր կողմերը:

Տարբերակման:

Եզրափակիչ:

Լոգոպեդական հետազոտության ընթացքում իրականացվում է խոսքի՝ արտաբերական ապարատի կառուցվածքի և շարժունակության, ձայնի, շնչառության, խոսքի տեմպի և ռիթմի, իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի, գրավորի և ընթերցանության ուսումնասիրություն, նշվում են խոսքային առաձնահատկությունները:

Հնչյունների արտաբերումը հետազոտվում է առանձին, վանկերում, բառերում, կապակցված խոսքում (երկխոսության, նկարների անվանման, բառերի, նախադասությունների կրկնության միջոցով):

Հնչութային լսողությունը հետազոտվում է հնչութային ընկալման, վերլուծության, համադրության, պատկերացումների ուսումնասիրության հետևյալ առաջադրանքների միջոցով.

- որոշել բառի առաջին (վերջին) հնչյունը,
- որոշել հնչյունի առկայությունը (բացակայությունը) բառում,
- որոշել հնչյունների քանակը բառում,
- վանկատել բառերը,

• տրված հնչյունով սկսվող բառ ասել և այլն:

Լոգոպեդն ուսումնասիրում է նաև երեխայի խաղային գործունեությունը՝ ընդհանուր և նուրբ շարժողականությունը, նպատակաուղղված գործունեությունը (նկար, ծեփ, ապլիկացիա, կառուցողական գործունեություն), ճանաչողական ոլորտը, ինքնասպասարկման և սոցիալիարմարողական հմտությունները, ինչպես նաև հայացքի կենտրոնացման, հուզական շփման, ստերեոտիպ խոսքի, շարժումների և գործողությունների, զրուցակցի խոսքին արձագանքելու, խոսքը որպես հաղորդակցման միջոց կիրառելու:

Հետազոտման տվյալները լոգոպեդն ամփոփում է խոսքի հետազոտման քարտում՝ նշելով երեխայի հոգեբանամանկավարժական համառոտ բնութագիրը, բանավոր և գրավոր խոսքի հետազոտման արդյունքները:

Լոգոպեդական աշխատանքը, պայմանավորված խոսքի խանգարման տեսակով, ենթադրում է խոսքի ձևավորում, զարգացում, խոսքի խանգարումների հաղթահարում, խոսքի վերականգնում: Լոգոպեդական աշխատանքը սովորաբար ընթանում է հետևյալ սխեմայով. հետազոտում, գնահատում, լոգոպեդական պարապմունքներ, մշտադիտարկումներ, աշխատանքի ավարտ (ելք): Լոգոպեդական աշխատանքում կարևորվում են նաև թղթավարությունը, համագործակցությունն այլ մասնագետների և լոգոպաթի ընտանիքի անդամների հետ, լոգոպեդական գիտելիքների տարածումը՝ իրազեկման և խոսքի խանգարումների կանխարգելման նպատակով: Լոգոպեդական պարապմունքները լինում են անհատական և խմբային՝ պահպանելով անհատական մոտեցման սկզբունքը: Խմբեր ձևավորելիս հաշվի են առնում խոսքի խանգարման տեսակը, տարիքը, պարապմունքների հաճախականությունը և տևողությունը: Անհրաժեշտ փաստաթղթերն են՝ հաշվառման մատյանը, խոսքային քարտը, պարապմունքների պլան-կոնսպեկտները, աշխատանքային գրաֆիկը:

Լոգոպեդական կաբինետում պետք է լինեն դիդակտիկ նյութեր, խաղեր, խաղալիքներ, երեխայի ինքնաարտահայտման համար նախատեսված նյութեր և պարագաներ, հայելի:

Լոգոպեդական աշխատանքի հիմնական մեթոդները կարելի է բաժանել 3 խմբի՝ գործնական, զննական, բառային:

Գործնական մեթոդներից են վարժությունները, խաղերը, հաղորդակցման իրավիճակների մոդելավորումը:

Զննական մեթոդներից են դիդակտիկ նյութերը, դիտումը, ունկնդրումը:

Բառային մեթոդներից են խոսքային նյութերը, պատմվածքները, գրույցը, ընթերցանությունը:

Ժամանակակից լոգոպեդիայում մշտապես մշակվում և առաջարկվում են խոսքի ու հաղորդակցման խանգարումների հաղթահարմանն ուղղված նորանոր մեթոդներ: Չափազանց կարևոր է լոգոպեդների կողմից ժամանակակից լոգոպեդական տեխնոլոգիաների տիրապետումն ու գործնականում դրանց կիրառումը : Լոգոպեդական աշխատանքի օպտիմալացումն առանձնահատուկ նշանակություն և կարևորություն է ձեռք բերում ներառական կրթության համատեքստում: Խոսքի ու հաղորդակցման խանգարումների վաղ հայտնաբերումն ու արդյունավետ մեթոդների կիրառմամբ դրանց հաղթահարումը նպաստում են այս անձանց ներառմանը երկրի կրթական, սոցիալական, մշակութային ոլորտներում:

- Հնչարտասանության խանգարման հաղթահարման տեխնոլոգիաներ: Դրանց նպատակն է հստակ հնչարտասանության ձևավորումը, հնչյունների դրումը, ամրապնդումն ու տարբերակումը:

Ըստ Լ. Ս. Վակուլենկոյի (2011), Օ. Ի. Կոստրովայի (2013)՝ ժամանակակից լոգոպեդիայում կիրառվում են ներքոնշյալ տեխնոլոգիաները.

- Հնչարտասանության խանգարման հաղթահարման տեխնոլոգիաներ:

Դրանց նպատակն է հստակ հնչարտասանության ձևավորումը, հնչյունների դրումը, ամրապնդումն ու տարբերակումը:

- Խոսքային շնչառության և ձայնի կարգավորման տեխնոլոգիաներ, որոնց կիրառման նպատակն է հաղթահարել խոսքային շնչառության և ձայնի թերությունները՝ բարելավելով խոսքի ըմբռնելիությունը, տեմպը, ռիթմը, արտահայտչականությունը:

- Լոգոպեդական մերսման տեխնոլոգիաներ: Սրանք կազմում են բժշկահոգեբանամանկավարժական աշխատանքի մի մասը: Կիրառվում են ռնգախոսության, դիզարտրիայի և խոսքի այլ խանգարումների ժամանակ: Երբեմն մերսումը հանդես է գալիս որպես արդյունավետ լոգոպեդական թերապիայի կարևոր նախապայման: Այն, որպես կանոն, օգտագործվում է արտաբերական օրգանների մկանային լարվածության խանգարումների դեպքում: Կարգավորելով ծայրամասային խոսքային օրգանների մկանային լարվածությունը՝ մերսումն անուղղակիորեն բարելավում է նաև խոսքի արտաբերական կողմը:

- Խոսքի բառաքերականական կողմի զարգացմանն ուղղված տեխնոլոգիաներ: Բառապաշարի հարստացումն ու ակտիվացումը, քերականական կառույցների ձևավորումն ու զարգացումը լոգոպեդական աշխատանքի կարևոր ուղղություններից են: Բառապաշարի հարստացումն ու քերականական կառույցների ձևավորումն

իրագործվում է լեզվի բնականոն զարգացման օրինաչափությունների հաշվառմամբ: • Կապակցված խոսքի զարգացման տեխնոլոգիաներ: Երեխայի լիարժեք հաղորդակցումը պայմանավորված է կապակցված խոսքի զարգացման մակարդակով: Կարևոր է, որ երեխաները հստակ ու տրամաբանական հաջորդականությամբ շարադրեն իրենց մտքերը, հարցեր տան և պատասխանեն հարցերին: Պատկերացնեն և խոսքում արտացոլեն գործողությունների հաջորդականությունը: Այս ուղղությամբ կիրառվող տեխնոլոգիաները ներառում են բազմազան խոսքային նյութեր, վարժություններ, խաղեր և առաջադրանքներ:

• Գրավոր խոսքի խանգարումների հաղթահարման տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են լեզվական վերլուծության ու համադրության զարգացմանը, հնչյունային ընկալմանը, հնչյունային և վանկային վերլուծությանն ու համադրմանը, քերականական սխալների հաղթահարմանը, տեսատարածական գործառույթների զարգացմանը և այլն:

• Համակարգչային տեխնոլոգիաներ: Վերջիններս կիրառվում են լոգոպեդական պարապմունքները բազմազանեցնելու, համակարգչային խաղերի ու վարժությունների միջոցով պարապմունքների նկատմամբ հետաքրքրությունը, երեխայի երկարատև կենտրոնացումն ապահովելու նպատակով: Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը պետք է լինի լոգոպեդի ուղղորդմամբ և հսկողությամբ:

• Խաղային տեխնոլոգիաներ: Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է պարապմունքը հազեցած խաղերով: Ժամանակակից լոգոպեդիայում գոյություն ունեն բազմազան խաղային տեխնոլոգիաներ: Լոգոպեդական աշխատանքում լայնորեն կիրառվում է դիդակտիկ (ուսուցանող) խաղը, որն ունի հետևյալ կառուցվածքը.

1. Դիդակտիկ խնդիր, այլ կերպ ասած՝ ուսումնական խնդիր, որի լուծմանն է միտված տվյալ խաղը (օր.՝ հնչյունի ճիշտ արտաբերության ամրապնդումը բառերում):

2. Խաղային խնդիր, որը, ի տարբերություն դիդակտիկ խնդրի, վերաբերում է երեխային (օր.՝ խաղ-մրցույթ՝ «Գուշակի՛ր հանելուկը», որի պատասխանը պարունակում է ամրապնդվող հնչյունը):

3. Խաղային գործողություններ, որոնց միջոցով լուծվում է խաղային խնդիրը: Որքան բազմազան են գործողությունները, այնքան հետաքրքիր է լինում խաղը (օր.՝ երեխային նախապես տրվում են ձկնիկներ և ծաղիկներ: Սեղանին դրվում է ակվարիում և ծաղկաման: Երեխան գուշակում է հանելուկը: Եթե պատասխանը պարունակում է ձ հնչյունը, ապա նա ձկնիկը դնում է ակվարիումի մեջ, իսկ եթե ծ հնչյունը, ապա ծաղիկը՝ ծաղկամանի մեջ):

4. Խաղի կանոններ, պահանջներ, որոնցով պետք է առաջնորդվեն մասնակիցները (օր.՝ չխանգարել խաղընկերոջը, չհուշել, երեք անգամ սխալվելու դեպքում դուրս գալ խաղից): Խաղի կանոնները ներկայացվում և քննարկվում են նախապես:

5. Ավարտ: Յուրաքանչյուր խաղ ենթադրում է արդյունքների ամփոփում, խրախուսանք: Լոգոպեդական աշխատանքի ընթացքում կիրառվող խաղերը կարելի է բաժանել ընդհանուր զարգացնող և գուտ լոգոպեդական խաղերի: Ընդհանուր զարգացնող խաղերը նպաստում են հոգեկան գործընթացների և ճանաչողական գործունեության զարգացմանը: Այս խմբին դասվող խաղերն ուղղված են լոգոպեդի և երեխայի միջև հուզական ու գործնական կապի ստեղծմանը, հաղորդակցման ոչ խոսքային միջոցների, նուրբ շարժողականության զարգացմանը, զգայական դաստիարակությանը, ոչ խոսքային հոգեկան գործընթացների զարգացմանը: Լոգոպեդական խաղերը նպաստում են շնչառության, ձայնի զարգացմանը, ճիշտ հնչարտաբերման ձևավորմանը, բառապաշարի, խոսքի քերականական կողմի զարգացմանը, գրավոր խոսքի և խոսքային հաղորդակցման ձևավորմանը, զարգացմանն ու վերականգնմանը: Խաղերի ընթացքում կարևոր է, որպեսզի լոգոպեդը և երեխան պահպանեն վարքի որոշակի կանոններ: Լոգոպեդական աշխատանքում անհրաժեշտ է խաղալիքների և խաղային պարագաների կոնկրետ հավաքածու՝ խաղալիքներ, խաղեր, խաղային պարագաներ ինքնաարտահայտման համար: Խաղալիքներ՝ ընտանիքի անդամներին և տարբեր մասնագիտություններ ներկայացնող տիկնիկներ, հագուստ տիկնիկների համար, հիգիենայի խաղալիք-պարագաներ, խաղալիք կենդանիներ, ձեռքի տիկնիկներ, խաղալիք կահույք, խաղալիք գործիքներ, տրանսպորտային միջոցներ, «մթերք», «ագրեսիվ» խաղալիքներ (դանակ, ձեռնաշղթաներ և այլն), մանր խաղալիքներ, տարբեր չափի, գույնի և զանազան նյութերից պատրաստված գնդակներ, փուչիկներ, խաղալիք ժամացույց: Խաղեր՝ լոտո, դոմինո, տրամաբանական շղթաներ, «Չորրորդն ավելորդ է», լոգոխորանարդիկներ, Սեհենի տախտակների մոդիֆիկացիաներ, նկարներ (առարկայական, սյուժետային, հաջորդական նկարների շարքեր, զույգ, կտրատված): Խաղային պարագաներ ինքնաարտահայտման համար՝ ջրով լի տարա, ավազով լի տարա, մանկական դույլ, բահ, ավազով խաղալու համար նախատեսված կաղապարներ, «շինանյութ», լարեր, թելեր, խմոր, ծեփանյութեր, կերպարվեստային պարագաներ, ընդդեմով լի տարա, դիմակներ, գլխարկներ, ակնոցներ և սյուժետադերային խաղի համար նախատեսված այլ պարագաներ:

• Խոսքի և հաղորդակցման այլընտրանքային տեխնոլոգիաներ: Աուտիզմ ունեցող անձանց խոսքի և հաղորդակցման դժվարությունների հաղթահարմանն ուղղված մեթոդիկաների թվում գերիշխում են այլընտրանքային, ոչ խոսքային միջոցների՝ ժեստերի, նկարների, սիմվոլների, տեխնիկական միջոցների, «խոսող» սարքերի, I-

Pod, I-Pad սարքերում ներբեռնվող համակարգչային ծրագրերի կիրառմամբ մեթոդիկաները:

- Ոչ ավանդական լոգոպեդական տեխնոլոգիաներից են երաժշտաթերապիան, ավագաթերապիան, արոմաթերապիան և այլն: Ոչ ավանդական տեխնոլոգիաները լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ են և բարենպաստ պայմաններ են ստեղծում լոգոպեդական թերապիայի համար:

- Լոգոպեդական հետազոտության տեխնոլոգիայի նպատակն է խոսքի խանգարման տարբերակված ախտորոշումը և լոգոպեդական միջամտության ուղղությունների որոշումը : Խոսքի հետազոտումը լոգոպեդական աշխատանքի կարևոր օղակներից է: Լոգոպեդական հետազոտման նպատակն է բացահայտել խոսքի խանգարման տեսակը և դրա հաղթահարման աշխատանքի մեթոդները, միջոցները, ինչպես նաև երեխայի ուսուցման հնարավորությունները:

2.2. ՀՆՉԱՐՏԱԲԵՐՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ :

Սխալ հնչարտաբերումը կամ ինչպես մասնագիտական գրականության մեջ է նշվում, խոսքի հնչյունային թերզարգացումն առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման խանգարում է, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ: Հնչյունային թերզարգացման (ՀԹ) դեպքում հնչարտաբերման խանգարումները չեն ազդում հնչութային լսողության, բառապաշարի, խոսքի քերականական կառուցվածքի, ընթերցանության և գրավոր խոսքի վրա: ՀԹ-ն դրսևորվում է դիսլալիայի արտաբերական-հնչյունային տեսակի, երբեմն նաև ռինոլալիայի և դիզարտրիայի դեպքում: Վերջին երկու դեպքերում, բացի սխալ հնչարտաբերման շտկման աշխատանքներից, իրականացվում են նաև այլ աշխատանքներ, օրինակ՝ լոգոպեդական մերսում, շնչառական վարժություններ և այլն: Հայախոս երեխաներն առավել հաճախ սխալ են արտաբերում կ, ք, գ (հետնալեզվային), ս, զ, ծ, ց, ձ (սուլականներ), շ, ժ, ճ, չ, ջ (շչականներ), լ, ր, ռ (ձայնորդներ) հնչյունները: Լոգոպեդական աշխատանքների կազմակերպումը

Հնչյունների սխալ արտաբերման շտկումն իրականացվում է հետևյալ փուլերով.

1) նախապատրաստական,

2) հնչյունի դրոմ,

3) դրված հնչյունի ամրապնդում,

4) դրված հնչյունի տարբերակում այլ հնչյուններից:

Նախապատրաստական փուլի հիմնական խնդիրը երեխային լոգոպեդական գործընթացի մեջ ներգրավելն է: Այս փուլում երեխան կատարում է հնչյունի դրմանը նպաստող արտաբերական վարժություններ:



Նկար 1

Հնչյունների դրումն իրականացվում է երեք եղանակով՝

1. ընդօրինակման

2. մեխանիկական միջամտության (լոգոպեդական զոնդեր, շպատեղներ)

3. խառը:

Հնչյունների դրման հաջորդականության սկզբունքի համաձայն՝ առաջին հերթին դրվում են պարզ, այնուհետև՝ բարդ արտաբերական դիրք ունեցող հնչյունները: Օրինակ՝ սուլականները, հետո՝ շչականները: Ելնելով այս սկզբունքից՝ երկշարք հնչյունների դեպքում խորհուրդ է տրվում սկզբում շտկել խուլ հնչյունը, հետո՝ ձայնեղը: Օրինակ՝ «ս» հնչյունը, ապա՝ «զ»-ն: Իսկ եռաշարք հնչյուններից առաջին հերթին նպատակահարմար է դնել, ամրապնդել և տարբերակել խուլը, ապա՝ շնչեղ խուլը, այնուհետև՝ ձայնեղը: Օրինակ՝ «ծ – ց – ձ», «ճ – չ – ջ»: Հնչյունների դրման գուգահեռության սկզբունքի համաձայն՝ միաժամանակ կարելի է շտկել տարբեր խմբերի պատկանող հնչյուններ, եթե դրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից իրենց արտաբերական կամ լսողական հատկանիշներով: Օրինակ՝ միաժամանակ կարելի է շտկել հետնալեզվայինները և սուլականները, բայց ոչ՝ սուլականներն ու շչականները, քանի որ դրանք նման են լսողական հատկանիշներով, և երեխաներն այդ հնչյունները հաճախ շփոթում են: Հնչյունների սխալ արտաբերման շտկման աշխատանքի կարևոր սկզբունքներից է խոսքային նյութի ճիշտ ընտրության սկզբունքը: Հնչյունի ամրապնդման և տարբերակման փուլերում խոսքային նյութն անհրաժեշտ է ընտրել այնպես, որ հնչյուն-տառի արտասանությունը և գրությունը չտարբերվեն: Օրինակ՝ չի կարելի «ձ» հնչյունի ամրապնդման համար ընտրել «դեղձ» բառը, քանի որ այս բառում լսում և արտաբերում ենք «ց»: Ամրապնդման փուլում խոսքային նյութը պետք է հազեցված լինի դրված հնչյունով և չպարունակի ամրապնդվող հնչյունին լսողական կամ արտաբերական հատկանիշներով մոտ հնչյունները: Օրինակ՝ «ս» հնչյունի ամրապնդման խոսքային նյութում չպետք է լինեն «շ», «զ», «ծ», «ց», «ձ» հնչյունները: Խոսքային նյութի ընտրության ժամանակ խորհուրդ է տրվում հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ որոշ բառերի առօրյա-խոսակցական արտասանությունը տարբերվում է գրականից: Օրինակ՝ «-ություն» վերջավորությունը խոսակցականում հնչում է որպես «-ուցյուն»: Ուստի «ս», «զ» և «ծ» հնչյունների արտասանության ամրապնդման ընթացքում պետք է բացառել այդ վերջավորությամբ բառերը: Ի տարբերություն ամրապնդման փուլի՝ տարբերակման ընթացքում անհրաժեշտ է խոսքային նյութն ընտրել այնպես, որ այն հազեցված լինի ամրապնդվող հնչյունով և արտաբերական կամ լսողական հատկանիշներով դրան մոտ հնչյուններով: Մյուս կողմից, խոսքային նյութը չպետք է պարունակի բոլոր այն հնչյունները, որոնք երեխան դեռևս սխալ է արտաբերում: Զննականության սկզբունքի համաձայն՝ հնչյունների սխալ արտաբերման շտկման աշխատանքում հարկավոր է կիրառել առարկայական և սյուժետային նկարներ, դիդակտիկ խաղեր: Այդ նյութերը հնարավորություն են տալիս հետաքրքիր և բազմաբովանդակ դարձնել աշխատանքը: Իրազննական պարագաներն ընտրելիս նույնպես պետք է մեծ ուշադրություն դարձնել խոսքային նյութի «մաքրությանը»: Մատչելիության և անհատական մոտեցման սկզբունքների համաձայն՝ խոսքային նյութի ընտրության և խաղերի

կազմակերպման ժամանակ պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

2.3 ՀՆՉԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

«Կ» հնչյունի օրինակով

• Կրկնել՝

Կա կո կու կի կե կը

ակա օկո ուկու իկի էկե ըկը

ակ օկ ուկ իկ էկ ըկ

կակ կոկ կուկ կիկ կեկ կըկ

• Կրկնել՝

Կա - կա- կապույտ, կարաս,

ակ – ակ- դերձակ

կե - կե – կեռաս, կեղև,

էկ – էկ - դէկ

կու- կու- կույտ, կուտ,

ուկ –ուկ- մուկ

կի - կի- կինո, կիրակի

իկ –իկ - մարտիկ

կո – կո – կոկոս, կորիզ

օկ -օկ - բողկ

կը – կը – կրել, կտրել

էկ- էկ – դէկ

ակա- ակո- ակի- ակու- ակը

իկա- իկո- իկի- իկու- իկե- իկը

էկա- էկո- էկի- էկու- էկե- էկը

ոկա- ոկո- ոկի- ոկե- ոկու- ոկը

ըկա- ըկո- ըկու- ըկի- ըկե- ըկը

ուկա- ուկո- ուկի- ուկե- ուկու- ուկը

• Կրկնել՝ կատու, կոհակ, կար, կրիա, կամար, կաթիլ, կաղին, կամավոր, կապար, կանգար, կարապ, կանաչ, կաճան, կարճ, կաթսա, կաթնամթերք, կաթիլ.....

Շիկահեր, մկրատ, տակառ, ոսկի, ապակի, ընկեր, սկյուռ, նկարիչ, մոմակալ, ընկույզ, ընկնել, մեկնել, բարեկամ, նկար, ոսկերիչ, կամակոր, կակտուս....

Զանգակ, բամբակ, լուիկ, նապաստակ, դանակ, ուլիկ, պուլիկ, բաժակ, բարակ, իլիկ, զատիկ, ծաղիկ, կոճակ, օղակ, շիտակ, ծորակ, կոպեկ, մահակ, ակ, բոնակ....

• Կրկնել՝ նախադասությունները

Կարինեն նկարեց կարմիր կակաչ:

Կարապետը հմուտ կոշկակար է:

Կոշկակար Կարոյի կոշիկը ծակ է:

Պույ-պույ մկնիկը կրծում էր կոկոսը:

Հանելուկներ

Կապիչով կապեմ կգնա,

Դաշտի զարդ է գույնը ալ,

Թե արձակեմ կմնա:

Ամեն այտին մի մեծ խալ:

(կոշիկ)

(կակաչ)

Ձվեր է ածում օտար բնի մեջ,

Ու իր անունն է կրկնում անվերջ:

(կկու)

• Կրկնել շուտասելուկները

Մեր տան առաջ՝ կանաչ կակաչ,
Կանաչ կակաչ մեր տան առաջ:

Կատուն կպավ,
Կատվի պատվին:

Ձուկը մուկը մեկ տապակ,
Մուկը ձուկը մեկ տապակ:

Ուլիկ

Ուլիկ, ուլիկ ու՛ր ես գնում,
Ասա ու՛մ ես, ում ես փնտրում,
Թե ուզում ես արի ինձ մոտ,
Ես քեզ կտամ ծաղիկ ու խոտ:

Տոտիկ, տոտիկ

Տոտիկ, տոտիկ Արի մոտիկ, Շուտ-շուտ արի Տատի բալիկ:	Նստիր տատի Փափուկ գոգին Փիսիկ դու էլ Նստիր կողքին:
--	---

Ուլիկ

Ուլի, ուլիկ իմ սիրուն
Իրիկուն է արի տուն:
Ես սիրում եմ ուլիկին,
Իսկ Ալիկը խոզուկին:

Կաչաղակ

Ա՛յ կաչաղակ, կաչաղակ
Ինչ ես անում դա՛կ, դա՛կ, դա՛կ
Էլ ուրիշ բան չգիտե՛ս
Որ դակ չանես շարունակ:

Փիսիկ

Փիսիկ, փիսիկ չալ պոչիկ,
Փոքրիկ սիրուն խուճուճիկ
Փիսիկ, փիսիկ շուտ արի
Մեր Լուսիկին օրորի:

Կաքավ


Կրթկրթալով կաքավն եկավ,
Կանաչ կարմիր սուլեր հագավ
ՈՒ կղկղան նրա կանչից
Ծիածանը կապեց կամար:

• «Ասենք միասին»

Երեխան ասում է «կ», լոգոպեդը ներկայացնում է գուշակվող բառի շարունակությունը: Այնուհետև երեխան բառն ասում է ամբողջությամբ:

Օրինակ՝ կ...արաս – կարաս, կ...արապ – կարապ: Խաղը կարելի է անցկացնել նաև «կ» հնչյունով ավարտվող բառերով: Օրինակ՝ դե ...կ - դեկ, դերձա...կ - դերձակ:

• «Արի խաղանք»



Նկար 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով դիսլալիայի դրսևորման տեսակները և հաղթահարման ուղիները տարրական դպրոցում թեման և գործնականում կիրառելով դիսլալիայի հաղթահարման ուղղված վարժանքներ, եկանք այն եզրահանգմանը, որ տարրական դպրոցում դիսլալիայի դրսևորմանը ժամանակին բացահայտելով և հաղթահարմանն ուղղված հետևողական քայլեր կազմակերպելով, կարող ենք հաղթահարել այն:

Նախադպրոցական տարիքն ամենաբարենպաստն է խոսքի թերությունները շտկելու համար: Առանձնահատուկ նշանակություն ունեն խոսքի զարգացման շեղումներ ունեցող երեխաների ժամանակին հայտնաբերման, այդ խանգարումների շտկման և դրանով իսկ խոսքի պաթոլոգիայի երեխաների խոսքի զարգացման տարիքային նորմին համապատասխանեցնելու խնդիրները:

Բոլորս գիտենք, որ ճիշտ խոսքը անհատականության հաջող զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է: Ուստի շատ կարևոր է հոգ տանել երեխաների խոսքի ժամանակին ձևավորման, տարբեր խախտումների կանխարգելման և շտկման մասին:

Դպրոց հաճախող ոչ բոլոր երեխաները ունեն հնչարտաբերման և գրելու բնականոն հնարավորություն:

Տարրական դասարաններում հաճախ հանդիպում են հնչունաարտաբերման և գրելու խանգարումներ ունեցող երեխաների: Այդ խանգարումները բացասաբար են ազդում երեխաների ուսման և առաջադիմության վրա: Այդ թերությունները պետք է շտկվեն դպրոցի լոգոպետների կողմից տարվող աշխատանքի շնորհիվ: Շատ ավելի դրական արդյունքի կարելի է հասնել, եթե լինի ծնող – ուսուցիչ – լոգոպետ մշտական համագործակցված աշխատանք:

Թվատության կանխարգելման ուղղված լոգոպետական աշխատանքները պետք է անցկացվեն վաղ տարիքից՝ 3-4 տարեկանից սկսած:

Պետք է հիշենք, որ յուրաքանչյուր խնդիր ավելի հեշտ է կանխարգելել, քան շտկել, այդ պատճառով էլ շատ կարևոր է հնարավորինս լրջորեն հետևենք այս խորհուրդներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Վ. Ավագյան, Ա.Գ.Գրիգորյան, Է.Ռ. Թադևոսյան, Ս.Գ. Կարապետյան, Ա.Ա. Կիրակոսյան, Գ.Ռ. Հովյան, Ա.Ռ. Չարչյան, Ժ.Հ. Պայլոզյան. <<Լոգոպեդիան գործնականում>> Երևան 2017
2. Ա. Ղազարյան <<Դպրոցահասակ երեխաների հնչարտաբերման և գրելու խանգարման տեսակներն ու շտկման ուղիները>> Ս. Էջմիածին 2016
3. Ժ. Պայլոզյան , Է. Թադևոսյան <<Հանրակրթական դպրոցի լոգոպեդական աշխատանքի հեռանկարային պլաններ>> Երևան 2007
4. Ա. Վարդանյան, Գ. Ամիրբեկյան , Գ. Հովյան , Հ. Գրիգորյան <<Երեխաների հնչարտաբերման թերությունների շտկման աշխատանքներ>> Երևան 2008
5. Гаубих Ю. Г., Липкина Ю. С., <<Игры в логопедической работе с детьми >>
Москва 1979
6. Doctors.am